ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱԺԱՐՈՅՇՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 63 - 64 (16866) ՇԱԲԱԹ 8 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՈՒՄ ԵՎ ՈՐՔԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՅՈՒՅԱԲԵՐՎԻ

Օգոստոսի 6-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց կառավարության հերթական նիստը:

Նիստի մեկնարկին վարչապետը անդրադառնալով կորոնավիրուսի համավարակի պայմաններում երկրի կառավարության կողմից սոցիալական աջակցության ոլորտում իրականացած եւ իրականացվելիք միջոցառումների թեմային՝ նշելով, որ գործադիր իշխանությունը կշարունակի այդ ուղղությամբ կոնկրետ քայլերի իրականացումը եւ կսկսի սոցիալական օգնության ներկայացման հերթական՝ երրորդ փուլը:

- Ընդհանուր առմամբ, կոմունալ օգնության բաժնով ծախսվելու է շուրջ 200 միլիոն լարի, երեխաներին ցուցաբերելիք օգնության հոդվածով՝ 170 միլիոն,- հայտարարեց վարչապետն ու հավելեց, որ տնտեսական ճգնաժամից երկիրը ոչ այս տարեվերջին, ոչ էլ հաջորդ տարի չի կարողանա դուրս գալ, այդ պատճառով էլ մի շարք որոշումներ են կայացվել քաղաքացիներին աջակցելու նպատակով:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՀԻՆԳՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ 12 ՏԱՐԻ ԱՆՑ

Տասներկու տարի է անցել՝ ռուս-վրացական 2008 թվականի օգոստոսյան պատերազմից:

Օգոստոսյան պատերազմին, ռուսական կողմի ներխուժման արդյունքում, զոհվեց Վրաստանի 228 խաղաղ քաղաքացի, 170 զինծառայող, 14 ոստիկան: Անհայտ կորած է գրանցվել 8 զինծառայող: Հարազատ վայրերից պատերազմի հետեւանքով հեռացավ 150 հազար մարդ: Այսօրվա դրությամբ, փախստականի կարգավիճակում շարունակում է մնալ շուրջ 30 հազարը:

Թեեւ Աբխազիայի եւ Ցխինվալիի երկրամասի վարչական սահմանի երկայնքով իրավիճակը սրվեց օգոստոսյան մարտական գործողություններից շատ առաջ, երբ Ռուսաստանը մինչեւ Ինգուրի գետը, երկաթուղու հաղորդակցության վերականգնման պատրվակով, Աբխազիայի դեֆակտո հանրապետություն մտցրեց երկաթուղային զորքեր, երբ Ցխինվալիի տարածաշրջանի վրացական գյուղերը գրեթե ամեն օր ռմբակոծվում էին: Ի պատասխան սադրիչ գործողությունների, օգոստոսի 8-ին, մոտավորապես ժամը 00.30-ին, Վրաստանի իշխանությունը որոշում ընդունեց վրացական դիմակայության գոտում սահմանադրական կարգուկանոնի վերականգնման մասին:

Վրաստանի զինված ուժերը հակադրվեցին անջատողական Ցխինվալիի զորամիավորումներին ու ռուսական բանակին: Ռոքիի թունելի անցմամբ եւ Փսուուի սահմանից Վրաստանի տարածք մուտք գործեցին շուրջ 15 հազար զինծառայող, ռուսական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԸ ՓՈԿԱՅՈՒՄ

Օգոստոսի 6-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին եւ Վրաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Քելլի Դեգնանը Վրաստանում, ներքին զբոսաշրջության զարգացման խրախուսման «Բացի'ր Վրաստանը» ծրագրի շրջանակներում, այցելեցին Սամցխե-Ջավախեթիի Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոկա գյուղում գտնվող մենաստան, հանդիպում ունեցան միանձնուհիների, տեղի բնակիչների հետ:

Ինչպես նշեց Սալոմե Զուրաբիշվիլին, երկրամասը նշանակալի ներուժ ունի կրոնական զբոսաշրջության զարգացման տեսանկյունից, եւ այն կարող է դառնալ կարեւոր սրբավայր համաշխարհային ուղղափառության համար:

- Ես ցանկանում էի, որպեսզի ԱՄՆ դեսպանը լիներ Սամցխե-Ջավախեթիի երկրամասի տեսարժան վայ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԵՆՔ ԵՐԲԵՔ ՉԵՆՔ ՀԱՄԱԿԵՐՊՎԻ ԲՌՆԱԶԱՎԹՄԱՆ ՀԵՏ»

Ռուս-վրացական օգոստոսյան պատերազմի 12-րդ տարելիցի կապակցությամբ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան իր ֆեյսբուքյան էջում կատարեց գրանցում, ըստ որի, Վրաստանը երբեք չի համակերպվի բռնազավթման հետ:

- 2008 թվականի օգոստոսյան պատերազմի 12-րդ տարելիցին, մենք հարգում ենք այն զինվորականների եւ քաղաքացիական անձանց հիշատակը, ովքեր իրենց կյանքը զոհեցին հանուն մեր հայրենիքի պաշտպանության: Ռուս-վրացական պատերազմին զոհ գնացին մեր հարյուրավոր քաղաքացիներ, այդ թվում՝ խաղաղ բնակիչներ, կորցրինք մեր հերոս զինվորներին, տարածքներ: Սրանք ողբերգությամբ լի օրեր էին, որ մեծագույն ցավ եւ ծանր հետեւանքներ թողեցին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԵՏՆԱԽԱՐԱՐ

Օգոստոսի 6-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան երկրի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցով պետնախարարի պաշտոնում ներկայացրեց 45-ամյա պրոֆեսիոնալ դիվանագետ Թեա Ախվլեդիանուն:

Թեա Ախվլեդիանին ծնվել է Թբիլիսիում, ավարտել՝ Թբսիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան համալսարանը, Բելգիայի ռազմավարական հետազոտությունների եվրոպական կենտրոնը՝ ստանալով միջազգային քաղաքագետի մագիստրի կոչում: 1997-ից մինչեւ 2018 թվականն աշխատել է Վրաստանի արտաքին գործերի նախարարության համակարգում, ստաժորի աստիճանից հասել գերատեսչության դեպարտամենտի տնօրենի պաշտոնին: Եղել է Վրաստանի դեսպանը Էստոնիայում, ունի արտակարգ եւ լիազոր դեսպանի աստիճան:

Մինչեւ վերջին նշանակումը, 2019 թվականից զբաղեցնում էր Վրաստանի աշխատանքի, առողջապահության, բռնագաղթվածների եւ սոցիալական պաշտպանության փոխնախարարի պաշտոնը:

Տիրապետում է անգլերենին, ռուսերենին, ֆրանսերենին: Ամուսնացած է, ունի զավակ:

Հիշեցնենք, որ Թեա Ախվլեդիանին պետնախարարի պաշտոնում փոխարինեց Քեթեւան Ցիխելաշվիլուն, ով մայիսի 22-ից նշանակվել է Վրաստանի մշտական ներկայացուցիչ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) առաքելությունում ու Վիեննայում գործող միջազգային կազմակերպություններում:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Օգոստոսի 4-ին, հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների համար, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» քաղաքական կուսակցության նախընտրական շտաբի ղեկավար Իրակլի Կոբախիձեն հանդիպում ունեցավ Վրաստանում ԵԱՀԿ-ի եւ ՕԴԻՐԻ դիտորդական առաքելության ներկայացուցիչներ Վլադիմիր Միսեւի եւ Քսենյա Դաշուտինի հետ:

Կուսակցության կենտրոնակայանում կայացած հանդիպմանը Իրակլի Կոբախիձեն մանրամասն տեղեկատվություն հանձնեց երկրում նախընտրական իրավիճակի, ընթացող քաղաքական գործընթացների մասին:

Խորագրի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՀԻՆԳՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ 12 ՏԱՐԻ ԱՆՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ավիացիան հրթիռային հարվածներ հասցրեց Գորիի ռազմակայանի տարածքին, Թբիլիսիի մոտակայքի՝ Վազիանիի ռազմակայանին, ավիացիոն գործարանին, ավազաբլրի վրա գտնվող ռադարին: Ռմբակոծվեցին Փոթիի նավահանգիստը, Սենակիի ու Մառնեուլիի ռազմակայանները: Ռուսաստանի 58-րդ բանակը գրավեց Ախալգորիի շրջանը, Վերին Աբխազիան, Զուգդիդին, Գորիի շրջանի մի քանի գյուղեր, Սաչխերեի շրջանի Պերեւի գյուղը: Մարտական ակտիվ գործողությունները դադարեցվեցին Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի միջամտությունից հետո: Սարկոզին օգոստոսի 12-ին վեց կետից բաղկացած խաղաղարար ծրագիրը նախ ներկայացրեց Մոսկվային, ապա՝ Թբիլիսիին: Իսկ սեպտեմբերի 8-ին այն ժամանակի նախագահներ Դմիտրի Մեդվեդեւը եւ Միխեիլ Սաակաշվիլին հստակեցրին խաղաղարար ծրագրի առանձին մանրամասներ:

Հինգօրյա պատերազմից հետո Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի եւ Ցխինվալիի երկրամասի (այսպես կոչված) Հարավային Օսեթիայի անկախությունը, խզվեցին Մոսկվայի եւ Թբիլիսիի միջեւ դիվանագիտական հարաբերությունները:

Տարելիցի կապակցությամբ, ավանդույթի համաձայն, Վրաստանի պետական գերատեսչություններում դրոշները կիջեցվեն, Վրաստանի բոլոր եկեղեցիներում, ի հիշատակ պատերազմի զոհերի, կմատուցվեն հոգեհանգստի պատարագներ: Օրվա առիթով երկրի գործադիր, օրենսդիր եւ դատական իշխանությունների, քաղաքական կուսակցությունների եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները կայցելեն Թբիլիսիի Մուխաթգվերդիի գերեզմանատուն, օգոստոսյան պատերազում զոհվածների հուշահամալիր, Հերոսների հրապարակի հուշահամալիր, ծաղկեպսակներ կդնեն, հարգանքի տուրք կմատուցեն զոհվածների հիշատակին:

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԵՆՔ ԵՐԲԵՔ ՉԵՆՔ ՀԱՄԱԿԵՐՊՎԻ ԲՌՆԱԶԱՎԹՄԱՆ ՀԵՏ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մենք երբեք չենք համակերպվի բռնազավթման հետ: Մենք կանգնած ենք այս մարտահրավերի լուծման խաղաղ ճանապարհին, եւ այս գործընթացում մեր կողքին են մեր միջազգային գործընկերները,- նշեց Գիորգի Գախարիան:

«Երբեք չեն կրկնելու անցյալի սխալները, քանի որ խաղաղությունը այլընտրանք չունի, եւ հենց խաղաղությունը, միասնական աշխատանքը, տնտեսական առաջընթացն ու զարգացումն են Վրաստանի միավորման նախապայմանը: Ռուսաստանը պետք է դադարեցնի ապակայունացնող գործողությունները եւ կատարի 2008 թվականի «Հրադադարի պայմանագրի» պայմանները: Այս պատերազմը չսպիացող վերք է յուրաքանչյուր վրացու սրտում»,- ասված է երկրի վարչապետի գրառման մեջ:



ՌՈՒՍԱՍՏԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԵՍԱՆՏԱՅԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Օգոստոսի 4-ին նշվեց Ռուսաստանի դեսանտայինների օրը, որը նշանավորվեց դեսանտայինների եւ ոստիկանների ընդհարմամբ: Հասարակական կարգուկանոնը խախտող դեսանտայիններին սանձահարելու ոստիկանության փորձերն ավարտվեցին զանգվածային ընդհարմամբ: Թե՛ ոստիկանների, թե՛ դեսանտայինների շարքերում կան վիրավորներ, ձերբակալվել է 4 դեսանտային:

ԱՄՆ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶՈՐԱԿԱԶՄԸ ԿՐՃԱՏՎՈՒՄ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ Միացյալ Նահանգներն ամերիկացի զինծառայողների թիվը Աֆղանստանում մոտ ժամանակներս կկրճատի մինչեւ չորս հազար:

Հիշեցնենք, որ փետրվարի վերջին Քաթարում կայացած արարողության ընթացքում ԱՄՆ-ը եւ «Թալիբյան» արմատական շարժումն ստորագրել են պատերազմի ավելի քան 18 տարվա ընթացքում առաջին հաշտության համաձայնագիրը, որը նախատեսում է Աֆղանստանից օտարերկրյա զորքերի դուրսբերում 14 ամսվա ընթացքում եւ միջաֆղանական երկխոսության սկսում գերիների փոխանակման գործարքի ավարտից հետո:

Ավելի վաղ, պետքարտուղար Մայք Փոմպեոն հայտարարել էր, որ ԱՄՆ-ը պլանավորում է զորքերն ամբողջությամբ Աֆղանստանից դուրս բերել մինչեւ 2021 թվականի մայիսը:

ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՒԹ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Օգոստոսի 6-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի փակ նիստին քննարկվեց 2008 թվականի օգոստոսյան պատերազմից հետո Վրաստանում տիրող իրավիճակը: Խորհրդի անդամները լսեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական Միրոսլավ Ենչայի զեկույցը: Հանդիպումն անցկացվեց առցանց ձեւաչափում:

Նիստի ավարտից հետո, Վրաստանի վերաբերյալ տարածվեց Բելգիայի, Էստոնիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Միացյալ Թագավորության, Նորվեգիայի եւ Իռլանդիայի համատեղ հայտարարությունը:

«Այս շաբաթ լրանում է 2008 թվականի օգոստոսի 7-ին Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ հակամարտության 12-րդ տարելիցը: Հիշում ենք նրանց, ովքեր զոհվել են, ովքեր մնացել են անօթեւան:

Մենք կայուն կերպով աջակցում ենք Վրաստանի անկախությանը, ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Ռուսաստանի զինված ուժերի շարունակական ներկայությունը Վրաստանի շրջաններում, Աբխազիայում եւ Հարավային Օսեթիայում, ինչպես նաեւ Ռուսաստանի կողմից այս շրջանների «ինքնիշխանության» ճանաչումը, խախտում են Վրաստանի տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությանը»,- նշված է համատեղ հայտարարության մեջ:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԱՌԱՋԸՆԹԱՑՆ ԱՌԿԱ Է, ՍԱԿԱՅՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 20-ին Կոջորիի «Բիոլի» համալիրում կառավարող «Վրացական երազանք - Ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունն անցկացրեց հոկտեմբերի 31-ի խորհրդարանական ընտրություններին մեծամասնական ընտրատարածքներում առաջադրվող պատգամավորության բոլոր 30 թեկնածուների ներկայացման շնորհանդեսը: Միջոցառմանը ներկա էին եւ ելույթ ունեցան «Վրացական երազանք - Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, Թբիլիսիի քաղաքապետ, «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, կուսակցության գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեն:

Իր խոսքում, կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին անդրադարձավ համավարակի արդյունքում երկրում ստեղծված քաղաքական իրավիճակին՝ հայտարարելով, որ «Վրացական երազանքի» կառավարությունը պատրաստված դիմակայեց մարտահրավերին, ինչն իր արտահայտությունը գտավ նրանում, որ Վրաստանը ներառվեց որպես համավարակ հաղթահարած երկրների առաջին տասնյակում:

Խոսելով առաջիկա ընտրությունների մասին, Բիձինա Իվանիշվիլին նշեց, որ «Երազանքի» կառավարման օրոք, առաջընթաց է գրանցվել գրեթե բոլոր ոլորտներում:

- Սակայն դա չի նշանակում, որ ամեն ինչ կարգավորված է, եւ հիմնախնդիրներ չկան: Շատ բան ունենք անելու, որպեսզի շարունակվի երկրի անշեղ զարգացումը: Այսօրվա բարդ իրավիճակում Վրաստանը վերջին ութ տարիների ընթացքում կարողացավ պահպանել խաղաղությունը, կայունությունն ու արդարացիորեն ընդգրկվեց անվտանգ երկրների շարքում,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին եւ հավելեց, որ կուսակցությունը առաջիկայի համար մշակել է համընդգրկուն ծրագիր, որի իրականացումը թույլ կտա նշանակալի ազդակ հաղորդել երկրի զարգացման գործընթացին:

- Հավատում եմ, որ մեր ժողովուրդն այնքան իմաստուն է, որ կկարողանա ճիշտ եզրակացության հանգել, ամեն ինչ կոչել իր անունով եւ ճիշտ ընտրություն կատարել,- հայտարարեց «Վրացական երազանքի» նախագահը:

Ներկա դրությամբ հայտնի են «Վրացական երազանքի» մեծամասնական թեկնածուները (Սամվել Մանուկյանը՝ Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքում, Զաուր Դարգալին՝ Մառնեուլի-Գարդաբանի, Գոգի Մեշվելիանին՝ Բոլնիսի-Դմանիսի-Թեթրիծղարո-Ծալկա, Անտոն Օբոլաշվիլին՝ Ախալցիխե-Ադիգենի-Բորժոմի-Ասպինձա եւ այլն):

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՔ ԱՄԻՍ ՄԻՆՉԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՌԱԿՏՈՒՄՆԵՐ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, երկրի խորհրդարանի կողմից ընդունած սահմանադրական փոփոխությունների համաձայն, 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները եւս կանցկացվեն այն ընտրահամակարգերով, թեեւ, ի տարբերություն նախորդների, այս անգամ մեծամասնական ընտրակարգով կբաշխվի 30 (նախկին 50-ի փոխարեն), իսկ համամասնական ընտրակարգով՝ 120 (նախկին 100-ի փոխարեն) մանդատ: Ըստ մեծամասնական մանդատների վերաբաշխվեցին նաեւ ընտրատարածքները:

Անցյալ տարվա վերջերին խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները սկսեցին քայլեր ձեռնարկել «Վրացական երազանք» կառավարող կուսակցության դեմ համատեղ ճակատով հանդես գալու նպատակով: Ծրագրվում էր ոչ միայն սահմանադրական փոփոխությունների համատեղ մշակված տարբերակների մշակում, այլեւ մեծամասնական ընտրատարածքներում փոխհամաձայնությամբ ընտրված թեկնածուների առաջադրում: Եթե ընտրական օրենսգրքի փոփոխությունների հարցում միացյալ ընդդիմությանը հաջողվեց հասնել որոշակի պայմանավորվածության, ապա մեծամասնականների թեկնածուների հարցը դարձավ ընդդիմության ճամբարի պառակտման պատճառ: Բանն այն է, որ միացյալ ընդդիմությանը հաջողվեց պայմանավորվածության հասնել Թբիլիսիում ութից միայն վեց ընտրատարածքների հարցում, իսկ ինչ վերաբերում է համամասնական ցուցակներին, ապա միացյալ ընդդիմությունում ներառված կուսակցությունները չծրագրեցին անգամ նման հարցում համաձայնության հասնելու հնարավորություն՝ հայտարարելով ինքնուրույն մասնակցելու ցանկություն: Առավել եւս, որ նոր փոփոխություններով ընտրաշեմի նվազեցումը մինչեւ խորհրդանշական մեկ տոկոսը, ընտրական սուբյեկտներին ինքնուրույն մանդատներ ստանալու հնարավորություն է ընձեռում:

Եթե ներկա դրությամբ «Վրացական երազանքի» մեծամասնական թեկնածուները հայտնի են, նույնը, առանձին թեկնածուների բացառություններով, չի կարելի ասել ընդդիմադիր եւ ոչ մի կուսակցության վերաբերյալ: Ոչ ճշտգրված տվյալներով կարելի է ասել, որ «Եվրոպական Վրաստանը» մեծամասնական թեկնածուներ է առաջադրելու 16 ընտրատարածքներում: Մասնավորապես, Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքում առաջադրում է Արսեն Կարապետյանի (2016 թվականի ընտրություններին նա «Միացյալ ազգային շարժման» թեկնածուն էր, մասնագիտությամբ՝ իրավաբան, երկար տարիներ աշխատել է ՆԳ նախարարության համակարգում, եղել է Նինոծմինդայի ոստիկանության պետ) թեկնածությունը, իսկ «Միացյալ ազգային շարժումը», չճշտգրված տվյալներով, մեծամասնական թեկնածուներ է առաջադրելու 12 ընտրատարածքներում (ենթադրաբար, օգոստոսի 20-ին), թեպետ կուսակցությունում ասացին, որ այդ թեմայով քննարկումները շարունակվում են:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԸ ՓՈԿԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րերում, քանի որ նա այստեղ չէր եղել, եւ դա նրան հետաքրքրում էր: Սամցխե-Ջավախեթին այն երկրամասն է, որտեղ առանձնակի ընդգծվում է վրացական հանդուրժողականությունը: Երկրամասը կարող է դառնալ կրոնական զբոսաշրջության կենտրոններից մեկը, քանի որ հենց այստեղից է Սուրբ Նինոն մուտք գործել Վրաստան: Երկրամասը կարող է նշանակալի սրբավայր դառնալ համաշխարհային ուղղափառության ու քրիստոնեության համար,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

ԱՄՆ դեսպան Քելլի Դեգնանն իր երախտագիտությունը հայտնեց Վրաստանի նախագահին Սամցխե-Ջավախեթիին ծանոթանալու ընձեռած հիանալի հնարավորության համար: Նրա խոսքով, սույն ուղեւորությունն անջնջելի տպավորություն է թողել:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԴՅՈՒՐԻՆԱՑՎԵԼ Է ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՂԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Վրաստանում դյուրինացվել է քրոնիկական հիվանդությունների դեղորայքի հանձնումն այն քաղաքացիներին, ովքեր ներառված են դեղորայքով անվճար մատակարարման պետական ծրագրում:

Հիշեցնենք, որ Վրաստանի առողջապահության նախարարությունը քրոնիկական հիվանդությունների դեղորայքի անվճար մատակարարարման ծրագիրը գործարկվել էր 2017 թվականի հուլիսի 1-ին, եւ այն ներառում էր սիրտանոթային, թոքերի քրոնիկական հիվանդությունների, երկրորդ տեսակի շաքարախտի, վահանաձեւ գեղձի, պարկինսոնի հիվանդություն ունեցող անձանց:

Մինչ օրս, քրոնիկական հիվանդությունների համար անհրաժեշտ դեղորայք ստանալու համար, քաղաքացիները սոցիալական ապահովման մոտակա բաժանմունքում պետք է անցնեին հատուկ գրանցում՝ ներկայացնելով ձեւաչափ 100 փաստաթուղթ, ինչպես նաեւ անձնական վկայական: Հիմա քաղաքացիները կարող են փաստաթուղթը ստանալ միայն բժշկի կողմից դուրս գրված էլեկտրոնային դեղատոմսով:

Միաժամանակ, փոխվել է նաեւ պետական ծրագրի մոդելը՝ այն ներառված է համընդհանուր առողջապահության պետական ծրագրում: Ինչպես հայտարարեցին առողջապահության նախարարությունում, նոր մոդելի պայմաններում քաղաքացիները անվճար դեղորայքը կարող են ստանալ ավելի մեծ թվով դեղատներում եւ դեղորայքի սպասարկման ընդհատումներ չեն լինի:

Քրոնիկական հիվանդությունների դեմ դեղորայքը խորհրդանշական գնով ստանալու պետական ծրագրից կարող են օգտվել սոցիալապես անապահով կարգավիճակ ունեցող անձինք, ում բարեկեցության վարկանիշով տրվել է 100 հազար միավորից քիչ, ինչպես նաեւ կենսաթոշակառուները, ակնհայտորեն արտահայտված սահմանափակ հնարավորություններ ունեցող անձինք եւ տարբեր հիվանդություններ ունեցող երեխաները:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ԿԱՆԽԱԳՃՎՈՒՄ Է ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԳՆԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՃ

Վրաստանում անասնապահական տնտեսություններում որոշակի անհանգստություն է տիրում: Հարցը վերաբերում է երկրում անասնակերի գների կտրուկ ավելացմանը: Ինչպես նշել է «Ագրո դուո»-ի նախագահ Ռուսուդան Գիգաշվիլին, եթե անասնակերը թանկանա, ապա դա կհանգեցնի կաթի եւ կաթնամթերքի գների ավելացման:

- Օրերս կայացավ հանդիպում ֆերմերների հետ: Նրանց տեղեկատվությամբ, անասնակերի գները կտրուկ ավելացել են եւ, եթե գործուն միջոցներ չձեռնարկվեն, ապա կաթի ինքնարժեքն աննախադեպ կավելանա: Վերջին հաշվով, ներկրվող ապրանքների նկատմամբ կհայտնվեն անմրցունակ պայմաններում եւ ստիպված կլինեն ընդհատել իրենց գործունեությունը,- հայտարարել է Ռուսուդան Գիգաշվիլին:

Անասնապահության ոլորտի ներկայացուցիչները, վերնոշյալ հիմնախնդրի կարգավորման համար, պահանջում են պետական հողերի երկարաժամկետ հանձնման իրավունք:

- Ֆերմերները գտնում են, որ երկրում շատ են չօգտագործված գյուղատնտեսական նշանակության հողերը, եւ պետությունից պահանջում են երկարաժամկետ վարձակալությամբ այդ հողերը հանձնել իրենց: Պետությունը մի կողմից օգնում է ֆերմերներին՝ նշելով, որ հատկացնում է նպաստներ, սակայն այնտեղ, որտեղ անհրաժեշտ է բյուրոկրատական եւ օրենսդրական աջակցություն ու հարցերի լուծման արագ մեխանիզմներ, չգիտես ինչու, իրավիճակը բարդանում է:

Հողերը էկոնոմիկայի նախարարության հաշվեկշռի վրա են, իսկ այդ ժամանակ ֆերմերներն իրենց դիմումներն ուղղում են գյուղատնտեսության նախարարությանը, ինչը, բնականաբար, չի կարող հանգեցնել հիմնախնդրի լուծման: Իսկ դա արգելակում է ոլորտի զարգացումը,- հայտարարել է «Ագրո դուո»-ի նախագահը:

ՄԻՋԱԴԵՊ

ՁՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱՅԻ ՈՐԴԻՆ ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է ԳՈԳԻ ԹՈՓԱՁԵԻ ԹՈՌԱՆԸ

Օգոստոսի 2-ի առավոտյան, Գոգի Թոփաձեի թոռանը՝ Լեւան Թոփաձեին, սեփական տան մոտ վիրավորել են դանակի չորս հարվածով: Միջադեպի առթիվ ձերբակալված Ջուրաբ Ժվանիայի որդին՝ Բեսո Ժվանիան վիրավորված է:

«Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցության նախկին ղեկավար, խորհրդարանի պատգամավոր Գոգի Թոփաձեի խոսքով, երիտասարդները Թբիլիսի էին եկել առավոտյան ժամը 5-ին: Նրա թոռը ընկերների հետ այդ ժամանակ գտնվում էր տանը, երբ նրա մոտ եկան անծանոթ մարդիկ: Անկոչ հյուրերից մեկը վիրավորեց այդտեղ գտնվող աղջկան, ինչը եւ հանգեցրեց կռվի:

Միջադեպը հաստատում է նաեւ Ջուրաբ Ժվանիայի եղբայր Գիգլա Ժվանիան: Նրա խոսքով, եղբորորդին մարմնական թեթեւ վնասվածք է ստացել, որը վտանգավոր չէ:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, օպերատիվ քննչական գործողության արդյունքում, մարմնական վնասվածք հասցնելու մեղադրանքով, ձերբակալվել է 1996 թվականին ծնված Բեսարիոն Ժվանիան: ՆԳ-ի տեղեկատվությամբ, նրան սպառնում է մինչեւ վեց տարվա ազատազրկում:



ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՆԱԽԱԳԱՀԻ ԴՐՈՇԸ

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին «Պետական նշանակության խորհրդանիշների մասին» Վրաստանի օրենքով հաշվի առնված գործընթացների պաշտպանությամբ, հաստատել է Վրաստանի նախագահի դրոշը:

Վրաստանի խորհրդարանին կից գործող Հերալդիկի պետական խորհուրդն ստեղծել էր դրոշի երեք նախագիծ, եւ դրանցից մեկը հաստատել է Վրաստանի նախագահը:

ԳԻՈՐԳԻ ՇԱՐՎԱՇԻՁԵՆ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

Օգոստոսի 4-ին Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանում անցկացվեց ռեկտորի ընտրության ընթացակարգ, որի արդյունքում ամենաշատ ձայն հավաքեց գործող ռեկտոր Գիորգի Շարվաշիձեն:

Ընտրություններին մասնակցում էր ԹՊՀ-ի ակադեմիական խորհրդի 37 անդամ:

Գիորգի Շարվաշիձեին աջակցել է խորհրդի 32 անդամ, իսկ Գիորգի Բարամիձեն եւ Ցիրա Բարամիձեն ստացել են մեկական ձայն:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

Վրաստանի պաշտպանության նախարարության հաշվեկշռի տակ գտնվող երկրի տարբեր երկրամասերում շուրջ 5 հազար բնակարանները՝ որպես սեփականություն, կտրվեն այդտեղ ապրող ընտանիքներին: Այդ մասին Վրաստանի կառավարության նիստում հայտարարեց պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին: Նրա խոսքով, որպես սեփականություն ստացած բնակարանների տերերը կարող են կազմել ընկերություններ եւ կարգավորել այդ բնակարանների հետ կապված հիմնախնդիրները:

Հիշեցնենք, որ գերատեսչության հաշվեկշռի տակ գտնվող բնակարաններում բնակեցված էին նախկին զինծառայողների, բռնագաղթվածների եւ սոցիալապես անապահով անձանց ընտանիքներ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱԹՈՒՄԻՈՒՄ, ՓՈԹԻՈՒՄ ԵՎ ՔՈՒԹԱՅԻՍԻՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության նախաձեռնությամբ, երկրի տարբեր երկրամասերում շարունակվում են հանդիպումներ գործարար սուբյեկտների հետ: Երկխոսության ձեւաչափով, հանդիպումն այս անգամ անցկացվեց Բաթումիում, Փոթիում եւ Քութայիսիում, որտեղ ներկայացվում է տեղեկատվություն Հավելյալ արժեքի հարկի (ՀԱՀ) նոր բարեփոխման մասին:

ՀԱՀ-ի Եվրամիության հանձնարարականներին մերձենալու նպատակով, հարկային օրենսդրությունում կառավարության եւ բիզնեսհատվածի սերտ համագործակցության արդյունքում, իրականացվեցին փոխություններ:

ՀԱՀ-ի բարեփոխման կապակցությամբ անցկացված հանդիպմանը Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետի տեղակալ Մամուկա Բարաթաշվիլին ներկայացրեց ՀԱՀ նոր բարեփոխման վերաբերյալ շնորհանդեսը եւ պատասխանեց ընկերությունների ներկայացուցիչների կողմից առաջադրված հարցերին:

Միջազգային լավագույն պրակտիկայի վրա հիմնված ՀԱՀ-ի բարեփոխումը բարելավեց ներդրումային միջավայրը, նպաստեց Վրաստանում եւ Եվրամիությունում գործող ձեռներեցների հետ համագործակությանը, դյուրինացրեց հարկային պարտավորությունների կատարումը, նվազեցրեց վիճելի դեպքերի թիվը:

Հանդիպմանը ներկա էին նաեւ եկամուտների ծառայության հարկային եւ մաքսային մեթոդաբանության դեպարտամենտի պետ Ռոման Բուղաձեն եւ իրավաբանական դեպարտամենտի պետ Լեւան Ծիթելաշվիլին:

Տեղեկատվական նման հանդիպումներ ծրագրված են նաեւ երկրի մյուս տարածաշրջաններում:

Վերոնշյալ փոփոխությունների մասին մանրամասն տեղեկատվություն տրված է https://www.rs.ge/6608 կայք-էջում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

200-ԱԿԱՆ ԼԱՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՐԱՌՅԱԼ 17 ՏԱՐԵԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Կառավարության նիստում Գիորգի Գախարիան հայտարարեց, որ չնայած համավարակով պայմանավորված գլոբալ տնտեսական ճգնաժամին, կառավարությունը պատասխանատվություն է կրում աջակցություն ցուցաբերել երկրի քաղաքացիներին, Վրաստանի բոլոր ընտանիքներին, որպեսզի սոցիալապես պահպանվի այն նվազագույնը, որին այդ ընտանիքներն արդեն հարմարվել էին: Վարչապետի խոսքով, ներկա դրությամբ, սոցիալական առումով ամենամեծ ռիսկի ներքո գտնվում են երեխաները:

- Հետեւաբար, նպատակային օգնության համար առավել հարմար խումբ ընտրել հնարավոր չէր: Մինչեւ 17 եւ 17 տարեկանը ներառյալ երեխաներին, անկախ նրանից, թե քանի երեխա կա ընտանիքում, կփոխանցվի 200-ական լարի: Բնականաբար, ունեւոր ընտանիքները կարող են հրաժարվել այդ օգնությունից: Այսօր Վրաստանում կա 880 հազար երեխա, ում օգնությունը հնարավորություն կտա առանձնապես բազմազավակ ընտանիքներում դիմանալ տնտեսական ճգնաժամի հետեւանքներին, նորմալ պատրաստվեն նոր ուսումնական տարվան,- հայտարարեց վարչապետը՝ նշելով, որ երեխաների համար սոցիալական օգնությունը կտրվի ուստարվա սկզբին:

- Տնտեսական ճգնաժամի պայմաններում մեր քաղաքացիները՝ ներառյալ 17 տարեկան երեխաները, պետության կողմից միանվագ 200 լարիի օգնություն կստանան, եւ սա կլինի ճգնաժամի ընթացքում ամենակարեւոր սոցիալական օգնությունը երեխաների համար սա կիրականացվի ճգնաժամի ընթացքում մեր երեխաներին աջակցության ծրագրի շրջանակներում,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

(Նշենք, որ Վրաստանի առողջապահության նախարար Եկատերինե Տիկարաձեի հայտարարությամբ, երեխաներին հատկացվելիք 200 լարիի օգնության ստացման համար գրանցումը կսկսվի օգոստոսի 15-ից, նախարարության հատուկ կայքում:

- Հաշվի առնելով բազայում երեխաների տվյալների առկայությունը, գրանցումը դյուրին կլինի, պետք է ներկայացնել միայն տեղեկություն երեխաների, ծնողների եւ բանկային հաշվեհամարների մասին,- նշեց նախարարը):

ԻՆՔՆԱԶԲԱՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱՆ

Խոսելով սոցիալական օգնության տրամադրման մասին՝ վարչապետը նշեց, որ պետք է բավարարել 300-ական լարիով ինքնազբաղ մարդկանց օգնությունը, ովքեր չեն հասցրել լրիվությամբ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը:

- Սոցիալական օգնության ծրագրի հայտարարումից հետո, ինքնազբաղ 250 հազար մարդ դիմում է ներկայացրել միանվագ 300 լարի օգնություն ստանալու համար: Դրանից 170 հազարը, ովքեր ներկայացրել էին համապատասխան փաստաթղթեր, ստացան այդ օգնությունը: Հաշվի առնելով երկրում տնտեսական ճգնաժամը՝ այն 80 հազարը, ովքեր լրիվությամբ չէին կարողացել ներկայացնել փաստաթղթերը, հայտարարում ենք, որ օգնություն կցուցաբերենք նաեւ 80 հազար այդ քաղաքացիներին,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԿՈՒՄԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ

Խոսելով բնակչությանը տրամադրվելիք սոցիալական օգնության մասին՝ Գիորգի Գախարիան նշեց, որ Վրաստանի կառավարության որոշմամբ, քաղաքացիների համար կոմունալ արտոնությունների ծրագիրը կշարունակվի նաեւ ձմռան ամիսներին:

- Մեր քաղաքացիների ընտանիքների եկամուտների նվազումը եւ աշխատատեղերի կորուստը փոխհատուցելու համար, կառավարությունը որոշում է ընդունել կոմունալ վճարների աջակցության ծրագիրը շարունակել նաեւ նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար եւ փետրվար ամիսների ընթացքում: Ծրագիրը կգործի նույն սկզբունքով, ինչպես նախկինում մինչեւ 200 կվ էլեկտրաէներգիա ու 200 խոր.մ գազ սպառողների կոմունալ ծախսերը կփոխհատուցվեն կառավարության կողմից,- հայտարարեց վարչապետը:

ԿՎԵՃԱՐՎԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ

Անդրադառնալով բարձրագույն կրթության թեմային՝ վարչապետը խոսեց մինչեւ 150 հազար սոցիալական միավոր ունեցող ուսանողների ուսումնական վարձի ֆինանսավորման մասին: Նրա խոսքով, այդ որոշումը պայմանավորված է տնտեսական ճգնաժամով ստեղծված իրավիճակով, որպեսզի ուսանողների մոտ ուսումնական գործընթացը չընդհատվի:

- Բնականաբար, ուսման գործընթացը պետք է անընդհատ առաջ տարվի: Մինչեւ 150 հազար միավոր ունեցող Վրաստանի քաղաքացի այն ուսանողները, ում վերջին մեկ տարվա ընթացքում ուսումնական վարձի չվճարման պատճառով, ուսանողի կարգավիճակը դադարեցվել է, բնականաբար, օգնության կարիք ունեն: Դա 99 տոկոսով տնտեսական ճգնաժամի արդյունքն է: Մեկ տարվա ընթացքում բոլոր այն ուսանողները, այդ թվում՝ նաեւ մինչեւ 150 հազար սոցիալական միավոր ունեցող ուսանողները, տարեկան կստանան 2 250 լարի ուսման վարձը մարելու համար: Այդ օգնությունից կօգտվի մոտ 33 հազար ուսանող,- նշեց Գիորգի Գախարիան:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

COVID-19

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՄՈՏԵՆՈՒՄ է 20 ՄԻԼԻՈՆԻ ԲՆԱԳՇԻՆ

Աշխարհում կորոնավիրուսի վարակի՝ COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 19 266 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 717 799 հազարը: Ապաքինվել է ավելի քան 12 միլիոն 365 հազարից ավելի մարդ:

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող **ԱՄՆ-ում 5 032 547** հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **162 805** է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Երկրորդ տեղում **Բրազիլիան** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **2 917 562-ի**, մահացածներինը՝ **98 644-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ վարակվել է **2 030 001** մարդ, մահացել՝ **41 673-ը**: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **871 894**, վարակի հետեւանքով մահացել՝ **14 606** մարդ:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **39 985-ի**, մահացածներինը՝ **777-ի**, ապաքինվածներինը՝ **32 008-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **33 247** մարդ: Վարակից մահացել է **479**, ապաքինվել՝ **29 275** մարդ:

Օգոստոսի 07-ի տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **1 213** մարդ, մահացել է **17-ը**, ապաքինվել՝ **994-ը**:

ԵՐԲ ԿԱՎԱՐՏՎԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԸ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱԳԾՈՒՄՆԵՐԸ

Օգոստոսի 6-ին, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ծեւավորված արտակարգ կոմիտեն հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ ասված է, որ նոր տիպի կորոնավիրուսի համավարակը դեռեւս համարվում է համաշխարհային արտակարգ իրավիճակ, եւ դեռ երկար ժամանակ այն կծգվի:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, աշխարհում կորոնավիրուսի տարածումից առ այսօր, վարակվածների թիվը հասել է 19,3 միլիոնի, մահացածների թիվը գերազանցել է 700 000-ը, ամեն 24 ժամը մեկ անգամ աշխարհում COVID-19-ից մահանում է միջինը 5 900 մարդ, ժամում՝ 247, իսկ ամեն 15 վարկյանում՝ մեկ մարդ:

Հիշեցնենք. ԱՀԿ-ը մարտի 11-ին հայտարարեց COVID-19 նոր վարակի բռնկման մասին:

ԴԻՄԱԿ ԿՐԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԸ ՄՆՈՒՄ է ՈՒԺԻ ՄԵՋ

ԴԻՄԱԿ ՉԿՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՎԵԼ է 831 ՄԱՐԴ

Վրաստանի ներքին գործերի նախարարության տեղեկատվությամբ, հունիսի 12-ից հուլիսի 30-ը ներառյալ, Վրաստանում արձանագրվել է դիմակ կրելու խախտման 831 դեպք:

Հիշեցնենք, որ ըստ Վրաստանի վարչական օրենսգրքի փոփոխությունների, փակ հանրային տարածքներում համավարակի ընթացքում դիմակ չկրելու համար ֆիզիկական անձը տուգանվում է 20, իսկ տվյալ հանրային տարածքի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձը կամ անհատ ձեռներեցը՝ 500 լարիով:

Դիմակ կրելը Վրաստանում պարտադիր է նաեւ հանրային տրանսպորտում եւ տաքսիներով երթեւեկելիս: Ուղեւորի եւ վարորդի կողմից դիմակ կրելու պահանջը չկատարելու տուգանքը եւս 20 լարի է:

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի փոխանցմամբ, ինչպես աշխարհի մեծ մասում, այնպես էլ՝ Վրաստանում կորոնավիրուսի ախտանշանները համեմատաբար թեթեւացել են եւ ծանր դեպքերի թիվն զգալիորեն նվազել է:

- Յուրաքանչյուր 75 օրը մեկ հրապարակում ենք հետազոտությունը եւ այժմ արդեն երրորդ հետազոտության պատասխաններն ունենք, որոնց հիման վրա կարող ենք ասել, որ ինչպես աշխարհի մեծ մասում, այնպես էլ՝ Վրաստանում, կորոնավիրուսի ախտանշանները համեմատաբար թեթեւացել են, եւ ծանր դեպքերի թիվն զգալիորեն նվազել է,- հայտարարել է Ամիրան Գամղրելիձեն:

COVID-19-ԻՆ ԲՆՈՐՈՇ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԸ

Վրաստանի հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջապահության կենտրոնի վերլուծության համաձայն, երկրում հայտնաբերված COVID-19-ով հաստատված վարակումներին, ամենաշատ բնորոշ են ջերմության ավելացումը, հազը, կոկորդի ցավը: Ըստ կենտրոնի տվյալների, հայտնաբերված ախտորոշիչների տոկոսային հարաբերակցությունը հետեւյալն է. ջերմության ավելացում՝ 57,3 տոկոս, հազ՝ 24,6, գլխացավ՝ 14,5, ընդհանուր թուլությունը՝ 11, դող՝ 10,1, դիարեա (փորլուծ)՝ 9,6, հոդացավեր՝ 9,2, շնչառության արգելակումներ՝ 7, մկանների ցավ՝ 6,3, սրտխառնոց՝ 5,7, փորացավ՝ 5,6, կրծքավանդակի ցավեր՝ 3,6, կոնյուկտիվիդը՝ 2,2, անհայտ ախտանշաններ՝ 20,75, ախտանշանների բացակայությունը՝ 11 տոկոս:

Տեղեկատվության համար. հիվանդությունների վերահսկողության կենտրոնի վերլուծությունը հիմնված է 980 հիվանդների տվյալների մշակման վրա: Ստուգված հիվանդներից ամենատարիքովը 90 տարեկան էր, ամենակրտսերը՝ 9 ամսական: Միջին տարիքը կազմել է. տղամարդկանցը՝ 52, կանանցը՝ 43 տարեկան: Մինչեւ 18 տարեկանների մոտ 42,6 COVID-19-ը հայտնաբերվել է 105 (10,7 տոկոս) դեպքում:

COVID-19-ով վարակման նոր դեպքերի ցուցանիշը 100 հազար բնակչի հաշվով ամենաբարձրն է Քվեմո Քարթլիի տարածաշրջանում ու Թբիլիսիում, իսկ ամենացածրը՝ Սամեգրելո, Զեմո Սվանեթիա եւ Իմերեթիա երկրամասերում:

Կլինիկական ախտանշանների հայտնաբերման եւ ստացիոնար բուժումը սկսելու միջեւ ժամանակահատվածը միջինը կազմում է չորս օր: Ստացիոնարից դուրս գրված պացիենտների մեծամասնությունը (69,1 տոկոս) տեղափոխվել է կարանտինի տարածքից, իսկ մոտ 10 տոկոսը իրենք են դիմել կլինիկաներին:

«Հիվանդության ընթացքի ծանրությունը նշանակալիորեն պայմանավորված է զուգահեռ հիվանդությունների առկայությունից: Այն մարդկանց մոտ, ովքեր չունեին զուգահեռ հիվանդություններ (73,9 տոկոս), 94,2 տոկոսը ընթանում էր թեթեւ, միջին ծանրության: Զուգահեռ հիվանդությունների առկայության դեպքում, 24 տոկոսի հիվանդությունն ընթանում էր ծանր կամ կրիտիկական»,- ասված է կենտրոնի հաշվետվության մեջ:

Ստացիոնարում անկողնային բուժման միջին ժամկետը կազմել է 21, նվազագույնը՝ 2, իսկ առավելագույնը՝ 73 օր:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ